



### 34. ՊԱՌՎՈՒ ՏՂԵՆ

Թամ յոթ տարի պառվու տղեն տերտրոջ մջկութեն կէներ, տերտեր զընդրա հախ շըրիդե: Կալոցի վրեն տղեն օր զուր հախ գուղեր, տերտեր կը բարկաներ, կըսեր:

— Տո՛ օռչնած, քընկեր իս շեն ու լեն տուն, կուտիս, կը խմիս, կը հագնիս, էլ ղհախ ի՞նչ կէնիս:

— Տերտե՛ր,— կըսեր պառվու տղեն,— աշխատանք իմ թափի, կող իմ կոտրի քու բանի մեջ, դու զիմ վարձք չըս ի՞դա: Վաղ ես լե կը կարգվիմ, տուն ու տեղ կը դնիմ, պառավ մամ ունիմ, մըզի ապրուստ պետք չէ՞:

Տերտեր զտղի ըսած իդա անկըջեն կառններ, ինա անկըջեն կիտեր դու:

Ճար կը կտրի, գիշեր մե գելնա, պուտուկ մե վառման գործելի կառնե, կէրթա կը մտնա ժամ, գելնա բեմ, կը պալտվի ու բաքլա կէնե, օր տերտերն քիդա: Մութ ու լուս էր, տերտեր գավազան ի ձեռք՝ «տեր ողորմեա, տեր ողորմեա» ըսելով կը մտնա ի ժամ: Բեմի քետեից պառվու տղեն խոզոտ ձենով կըսե.

— Զըմ օղորմանա՛, չըմ օղորմանա՛:

Տերտեր զալաքուջտ կէղնի, կը փշամազի, կըսե.

— Մեռնիմ քըզի, սուրբ Յովանես, քորի՞ն չըս օղորմանա, ի՞նչ եմ էրի:

— Պառվու տղի հախն քորի՞ն չըս իդա: Իգաս՝ կօղորմանամ, չիգաս՝ չըմ օղորմանա:

— Կիգամ, կիգամ, օղորմացի. մեռնիմ քրդի սուրբ Յովաննս:  
— Օր հմալե հարի դոգեկապդի տկլոզցի, զգավազան էցկե  
թևերդի, արի բեմի չառջև կըղի, զձեռքսի դնիմ վըր գլխուդ, օռչնիմ,  
օղորմանամ:

Տերտեր հարի գոտեկապ կը տկլոզնա, զգավազան կէցկե թևեր,  
կէրթա բեմի չառջև կը կըզի, տղեն հմա զպուտկի շլշլան քուրա-գոր-  
ծելին կը կործե տերտրոջ տկլոզ պառեկին: Տերտեր ձվալով կը  
փախնի, օր չեչնա դուս, գավազան կասըռվի դուան, չը կոնա դուս  
լեչնա: էդ վախտ ժամակծիկ պառավ մե ներս կը մտնա, կըսե.

— Տե՛րտեր, մեռնիմ քրզի, չըսօր ի՞նչ ամիս է:

Տերտեր վըվըրալեն կըսե.

— Օռչնած, ի՞նչ ամիս:

Ի՞նչ ամլամիս,

Սրբեր բարկացած ին,

Կրակ թափեցին վըր վզիս.

Ի՞նչ գինամ չըսօր ի՞նչ ամիս:

Տերտեր հազար դուբալով դոնով դուս գելնա, հարի կէրթա  
«ոուն՝ զոլ մե կաշի պառեկեն կը պրծնա, գընկնա: էն լուսուն հրա-  
մանք կէնե, զհորու բերան բանալ կիտա: Լե տերտեր պառվու տզից  
խոլալի հալով չը պրծնա: Քաղոցի ժամանակ տերտեր զուբարա  
կէնե, օր զարտ քաղել տա:

— Պառվու տղա՛,— կըսե տերտեր,— իրիցկնկան ըսե թըղ  
հաց ու զադ էնե, մարդ շատ ին էկած, չէղնի մնանք ամոթով:

Պառվու տղեն կէրթա, կըսե.

— Տերտրակի՛ն, զուբարի մարդիկ շատ ին, տերտեր կըսե թըղ  
զբուղա գմեշ մորթե, հաց ու զադ շատ էնե, չէղնինք ամոթով:

Պառվու տղեն ու իրիցկին զբուզեն կը թալին գետին, կը մոր-  
թին, հաց ու զադ շատ կէնին: Տղեն՝ սել մե լիք հաց ու զադ,— Էլ  
էխնի, էլ քյաբաբ, էլ մսով տոլմա ու փլավ կը տանե արտ, զուբարի  
խալի բոլ-բոլ կուտին, դտերտրոջ արտ կը քաղին, թմին: Յիրկուն  
տերտեր ուրախ զուրախ կը դառնա տուն:

Իրիցկին կըսե.

— Քա՛ մարդ, դո՛ւ էր ըսի, թե զբուզեն մորթե, հաց ու զադ  
շինե, իրդատ շատ է էկի, չը մնանք ամոթով:

— Տո՛, իմալ բուզեն, մկա դու զգմեշ մորթե՞ր իս:

— Հա՛, վոլա, մորթեր իմ:

— Ո՞ն ըսեց:

— Պառվու տղեն:

Տերտեր կը հեռստի, զգավաղան կը վերցու, աղջկներ լե հետ  
գրնկնան պառվու տղի յետե. տղեն կը փախնի, ուստ գիկա  
հովվի մե:

— Տղա՛,— կը հարցու հովիվ,— էդ յորի՞ն կը փախնիս, քըղի  
ի՞նչ է պատահրի:

— Տո՛, ի՞նչ պտի էղնի, կը տեսնա՞ս տերտեր, զուր աղջըկներ  
յընկած ին յետեսի, կըսին. «Արի կարգվի, առ ղտերտրոջ աղջիկ», ես  
լե չըմ յուզի, կը փախնիմ, օր աղատիմ:

Հովիվ կըսե:

— Տո՛ անգետ, յորի՞ն չըս կարգվի: Էրանեկ չէ՞ր, օր ես քու  
տեղն էղնենք:

— Ախպե՛ր,— կըսե տղեն,— արի ղհալավ մի փոխինք, ես  
կէղնիմ հովիվ, դու էղի իմ տեղ, թը՛ղ տանին ղքըզի կարգին:

Զաւլըներ կը փոխին, տղեն կանն զօխչար կը հեռնա: Հո-  
վիվ կը կանի ճամպու վրեն, օր տերտեր գա զուր փեսացուն տանե:  
Տերտերն ու աղջըկներ գիկան զհովիվ կը բռնին ու պրս՛տ կը թալին  
մըջ գետին, հովիվ կը խեղդվի, ջուր կը բղբղա:

Աղջիկներ կըսին.

— Տերտե՛ր, ջուր յորի՞ն կը բղբղա:

— Լա՛ո, պառվու տղեն կըսե, «Օխչար պտի հանիմ ջրի տըկեն,  
քո՛ւ հանիմ, թե կոտըշով:

— Զէ՛, չէ՛, յամա՛ն,— կըսին աղջըկներ,— թըղ կոտըշներով  
օխչար չը հանե, կոտըշով աղեկ չէ, կթեւու գահ մեր շորերը կը ձե-  
վըռտին...

